# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42
vaghashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը հունվարի 2018 թվականի N 1-Ա

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 24-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝
   1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին» N22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի սեփականություն հանդիսացող 05-082-0568-0004 կադաստրային ծածկագրով հողակտորը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՔԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42
vaghashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը հունվարի 2018 թվականի N 2-Ն

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը հաստատելու մասին» N22-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 3-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետում «չորս հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42
vaghashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը հունվարի 2018 թվականի N 3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն՝

1) վարչական բյուջեի եկամուտներ՝ 104372.1 հազար դրամ.

2) վարչական բյուջեի ծախսեր՝ 104372.1 հազար դրամ.

3) ֆոնդային բյուջեի ծախսեր, ընդամենը՝ 2089.2 հազար դրամ.

4) բյուջեի միջոցների վարչական մասի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ, ֆոնդային մասի դեֆիցիտը (պակասուրդը)՝ 2089.2 հազար դրամ, որի համար ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ 2089.2 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42
vaghashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը հունվարի 2018 թվականի N 4-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-082-0568-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի սեփականություն հանդիսացող, 33-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող 05-082-0568-0004 կադաստրային ծածկագրով 0.0963 հա մակերեսով հողակտորը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) դնել աճուրդով վաճառքի:
2. Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՔԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**